



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

1 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով «Թրու Ֆրենդս» ՍՊԸ-ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց.

1. «Թրու Ֆրենդս» ՍՊԸ-ն 12.06.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613 և 622-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը փաստում է, որ. «...վիճարկվող նորմը կոչված լինելով պաշտպանելու իրավատիրոջը և կարգավորելու համապատասխան իրավահարաբերությունը հակառակը պատկան մարմինների կողմից օգտագործվում է վարձակալի և անշարժ գույքի սեփականատիրոջ իրավունքը խախտելու համար»: ... «Վիճարկվող երկու նորմերն էլ պարարտ դաշտ են վարչական մարմինների համար իրավատերերի հետ վարվելու սեփական հայեցողությամբ ինչպես ներկայացված դեպքում»:

Դիմողը նաև նշում է, որ. «Իրավակիրառ պրակտիկան ոչ միայն չի հստակեցրել այդ շրջանակը, այլ հակասական մեկնաբանության միջոցով էլ ավելի է խճճել այս եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է.

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ, իսկ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման՝ նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Մինչդեռ դիմողն ընդհանրապես որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ: Դիմողն ընդամենը փորձել է մեկնաբանել ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 613 և 622-րդ հոդվածները՝ մասնավորապես նշելով, որ «...հնարավոր չէ ընկալել օրենսդրի կողմից վիճարկվող դրույթի՝ գույքը վարձակալին տրամադրել վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում եզրույթի բովանդակության սահմանները», և հիշյալ նորմը իրավակիրառ պրակտիկայում ձեռք է բերել հակասահմանադրական բովանդակություն, որը և հակասում է ՀՀ Սահմանադրության 8, 31 և 33.1-րդ հոդվածներին:

Դիմումի ընդհանուր փրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրան կարմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց:

ՏՏ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Բացի դրանից, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՏՏ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Թրու ֆրենդս» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 հուլիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-7